ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Հայկական ԽՍՀ մի խումբ ժողովրդական դեպուտատներ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ, ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովին, Խորհրդային Միության ժողովրդական դեպուտատների համագումարին հղել են բաց նամակ, որով իրենց տագնապն են հայտնել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և նրա շուրջն ստեղծված լարված իրավիճակի կապակցությամբ:

Նամակում շարադրված են այն հիմնապատճառները, որոնք հանգեցրել են Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի սրմանը, հանրապետությունում և ԼՂԻՄ-ում բողոքի ցույցերի, տարերային միտինգների ու գործադուլների անցկացմանը: Իրավիճակն ավելի է սրվում հանրապետությունում և ԼՂԻՄ-ում հատուկ դրության մտցմամբ, Ադրբեջանից տեղահան արված 100-հազարավոր հայ մարդկանց ծանր կացությամբ, ավերիչ երկրաշարժի հետևանքներով:

Դեպուտատները անհրաժեշտ են համարել, ելնելով լենինյան ազգային քաղաքականության սկզբունքներից, միջազգային իրավական ակտերից, քննության առնել մի շարք կարևոր հարցեր, որոնք հուզում են իրենց ընտրողներին, ամբողջ հայ ժողովրդին: Դրանք վերաբերում են 1921 թ. Անդրկովկասի հակադեմոկրատական սահմանագծման ակտի և 1921 թ. մարտի 16-ի խորհրդա-թուրքական պայմանագրի գնահատմանը, Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարության կողմից կիրառվող և ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի կողմից շարունակվող մարզի ադրբեջանականացման քաղաքականությանը, ԼՂԻՄ-ի միացմանը Հայկական ԽՍՀ-ին, 1915—1922 թթ. Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում, ինչպես նաև 1988 թ. Սումգայիթում հայերի ցեղասպանության պաշտոնական ճանաչմանը, ղարաբաղյան շարժման ձերբակալված ղեկավարների ազատմանը, վերջերս անցկացված ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների ընտրություններում թույլ տրված սահմանադրական խախտումների համար հատուկ հանձնաժողովի ստեղծմանը:

Նամակի հեղինակները նշել են, որ Ղարաբաղի պրոբլեմը ազգամիջյան հարաբերությունների մասնավոր հարց չէ, այլ ցավոտ, սուր պրոբլեմ, որով պետք է անհանգստանան ամբողջ երկրի ճակատագրի, վերակառուցման բախտի համար շահագրգռված բոլոր առողջ ուժերը:

Նամակն ստորագրել են Հայկական ԽՍՀ 61 դեպուտատներ: